



Ֆ. ԿՈՆ  
ՄԵՐ  
ԱՄՆԻՍՏԻԱՆ

891.715

Կ-70

ՊԵՏՐՈՎ 1938 ՅԵՐԵՎԱՆ

6 NOV 2011

89/71.5  
4-70

Տ. ԿՈՆ

Այ

# ՄԵՐ ԱՄՆԻՍԻԱՆ

Նկարները՝ Ա. Լավրովի

21.10.8  
05

Թ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՀՀԿ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՒՄԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1 9 3 8

156  
45

1904թվին արգեն զդացվում եր հեղափոխության մոտեցումը։ Վերադառնալով աքսորից, յես չհավատացի իմ աչքերին։ Յերիտասարդ հասակումս, յերբ յես սկսեցի հեղափոխական աշխատանքը, մենք մի բուռն եյինք։ 1904 թվին հեղափոխական բանվորների թիվը հազարների յեր հասում։

Տեղի եյին ունենում ցույցեր, միտինգներ։ Փողոցներում նշում եյին հեղափոխական յերգեր, այստեղ-այնտեղ յերևում եյին կարմիր գրոշակներ։ Ցուցաբարներին հետապնդում եր վոստիկանությունը, բայց նա չեր կարողանում նրանց հախից գալ։

Յեթե մի տեղ նրանց ցրում եր, մի ուրիշ տեղ եյին հավաքվում։ Մկրտչական շրջանում յես միտին գիտում եյի, թե ինչ ե կատարվում, բայց մի ամիս ել չեր անցել, յերբ յես գործի կպա։

Ժամանակը շատ յեռուն եր, միտինգից միտինգ եյինք անցնում, ժողովից՝ ժողով, ցույցից՝ ցույց։

Բայց 1905 թվի հունվարին, յերբ իմացանք Պետերբուրգի բանվորների յելույթների մասին, բանվորական Վարչավան միանդամից մարտական տեսք ընդունեց։

Նույնիսկ յերեխաները ձեռնպահ չեյին մնում։ Դիպուկ նետած քարերով նրանք ջարդում եյին փողոցների լավտերները, իսկ բանվորներին հալածող կազակները և ժանդարմները մթնում չեյին կարողանում գենք գործադրել։

Փողոցները պատճեշվում եյին բարիկադներով, մարտերը կազակների հետ հաճախակի եյին դարձել։ Բանվորները կրա-

կոցներին պատաօխանում եյին կրակոցներով։ Տարվա վերջին մենք իմացանք Մոսկվայի ապստամբության մասին։ Բանվորները սպասում եյին միայն տեղեկությունների ուրիշ քաղաքներից, վորպեսզի ապստամբէն նաև Վարշավայում։

Հենց այդ ժամանակ հայտնի յեղավ, վոր ցարական կառավարությունը պատրաստվում է Վարչավայից զրքեր ուղարկել Մոսկվա ապստամբությունը ճնշելու համար։ Այդ չեր կարելի թույլ տալ։ Կուսակցության ցուցմունքների համաձայն քաղաքի կենտրոնում ցույց կազմակերպվեց։

Կազակներից ցույցը պաշտպանելու համար առանձնացված եյին մի քանի տասնյակ բանվորներ։

Նրանք պետք ե գուրս գային կազակների դեմ և նոնականեր նետելին, վորպեսզի հետ պահեն կազակներին և ցուցարարներին հնարավորություն դան հեռանալու։

Ամեն ինչ արվեց այնպես, ինչպես կուսակցությունն եր ցուցմունք տվել։ Այդ ցույցից հետո իշխանությունները չեյին համարձակվում զորք ուղարկել Մոսկվա։ Բայց մը քանի մարդ, վոր ցուցարաբներին պաշտպանել եյին և կազակներին հանդիպել եյին հրացանաձգությամբ, բանտարկվեցին, դատի տրվեցին և մահապատժի դատապարտվեցին։

Նրանք պահվում եյին հետաքննական բանտում։

Այդ բանտից փախչելու մասին մտածել անգամ չեր կարելի։ Նա գտնվում եր քաղաքի կենտրոնում, պահակները կանգնած եյին և ներսից, և գրսից, իսկ բանտի հարելան փողոցների յուրաքանչյուր անկյունում կանգնած եյին զինվորների շըղթաներ։

Բայց մի անգամ, յերբ յես հերթապահում եյի կուսակցության կենտրոնական կոմիտեյի բյուրոյում, ինձ մոտ յեկավ կուսակցության անդամ Յուլյան։

— Վիտը ինչում ե ձեզ գնալ նրա մոտ՝ տեսակցության, — ի՞նչ։

Ցես չեյի հավատում իմ ականջներին։

— Վիտը ինչում ե ձեզ գնալ նրա մոտ՝ տեսակցության։

Վիտը փորձած կուսակցական եր, վոր փախել եր Սիրիրից, կենտրոնական կոմիտեյի անդամ եր, նստել եր Պավլյակի հայտնի բանտում, ինձ, նախկին տաժանորդիս, անլեգալիս, վորին վնառում եր վոստիկանությունը, կանչում ե բանս... «տեսակցության»։

Առաջին մոմենտին այդ ինձ թվաց առնվազն տարորինակ։

Բայց կանչում եր Վիտը, մի լուրջ գործիչ, վոր կշռում ե յուրաքանչյուր խոսք, մտածում ամեն մի վճիռ։

— Նա ձեզ չի ասել բանն ինչումն ե։

Յուլիան՝ Վիտի քույրը, վոր շատ բանում հիշեցնում եր յեղագրը, հանդիսատ պատասխանեց։

— Վոչ։ Նա միայն ասաց, վոր գուք մեր մոր հետ, վորպես ազգական, գնաք նրա մոտ։ Համենայն գեպս ազգականներիս մեկի փաստաթղթերը վաղը յես կրերեմ ձեզ։

Ինչ վոր մեկը յեկավ հրահանգներ ստանալու։

Յուլյան գնաց։

Մյուն որը յես Վիտի մոր հետ գնացի Պավլյակ։ Զեմ կարող ասել, վոր յես առանց հուզմունքի անցա բանտի շեմքը, վորտեղ յես վորպես տաժանորդ, նստած եյի դրանից քսան տարի առաջ։ Յես հասկանում եյի, վոր մի հասարակ պատահականություն, վորնե անհետանություն, պատահական հանդիպում։ և յես կմնամ այդ բանտում վոչ ինչպես հաճախորդ, այլ վորպես բնակիչ։

Մեղ տարան գրասենյակ։ Սեղանների վրա խղմզում եյին բանտի աստիճանավորները, մեկմեկ ել վերպատ եյին վերակացուները, այս կալանավորներին գուրս եյին տանում, մյուսներին ներս եյին բերում, իսկ միջնապատի մոտ, վորով առանձնացված եր գրասենյակը, հավաքվել եյին հաճախորդները։

Վիտի մայրը ցույց տվեց նրա հետ տեսակցություն ունենալու վկայականն իր և ազգականի համար։ Հերթապահ վերակացուն, վոչինչ չկասկածելով, իսկուն գնաց Վիտի հետեվից, և մի բողեյից հետ Վիտն արդեն կանգնած եր միջնապատի մյուս կողմը։ Չոր, համառոտ, բանիմաց կերպով նա բացարեց, թե ինչու յեր ինձ կանչել։

Խոսքը վերաբերում եր հետաքննական բանտից այն տասը ընկերների ազատմանը, վորոնք ցույցը պաշտպանելու համար մահվան եյին գատապարտված։ Առայժմ վճիռը չեր հաստատված գեներալ նահանգապետի կողմից, նրանք պետք ե պահվեյին Պավլյակում, բայց վորպեսզի մահապատիժն ի կատար ածեն, նրանց պետք ե փոխադրեյին Վարշավայի միջնարեդը։

Դեռևս ժամանակ կար և այն պետք եր ոգտագործել նըն բանց վրկելու համար։

Վիտին չեր կարելի կասկածել ցնորամտության մեջ, այնուամենայնիվ այն ամենը, ինչ վոր նա յեր ատում, ինձ ցնորք թվաց, այնպես վոր հաղիվ թե հնարավոր լիներ այն լուրջ քըն-նության առնել: Բայց Վիտը հանգիստ կերպով զարգացնում եր իր ծրագիրը:

— Ավագ վոստիկանապետ Մայերի ստորագրությամբ պետք ե թուղթ ուղարկել վերակացվին, հաղորդելով, վոր այսինչ ժամին ժանդարմի ռոտմիստրը պահակախմբի հետ պետք ե գարանտը՝ մահվան դատապարտված այսինչ բանտարկյալներին տանելու. նշանակված ժամին և՛ բանտարկյալները պետք ե պատրաստ լինեն մեկնելու, և՛ բանտի ծածկակառքը պետք ե պատրաստ լինի նրանց տանելու: Այդ ծրագիրն իրագործելու համար մարդիկ ընտրելը դժվար չե. համարձակ, վճռական և, ամենապլիսավորը, ճարպիկ մարդիկ կդանեք:

— Պոչ մի ցնորամտություն այս ծրագրում չկա,— ավելացրեց նա հանգիստ, բայց վճռականորեն, ըստ յերեվույթին, հասկանալով, թե ինչպիսի տպավորություն գործեց ինձ վրա նրա առաջարկը— Բայց պետք ե շտապել:

Ցես այնպես եյի շշմած, վոր նույնիսկ նրան չհակածառեցի: Լոեց նաև Վիտը, բայց կարճ ժամանակով:

— Այդ կարելի յե անել և պետք ե անել—պնդում եր Վիտը: Դերձակների խմբակը կպատրաստի զգեստավորումը, թիթեղագործները— գլխարկի վահանակները, զինվորականները կը պատրաստեն «վոստիկաններին» կամ «ժանդարմներին»:

Ցես ինձ պարզ հաշիվ եյի տալիս այդ գործի դժվարությունների և վտանգների նկատմամբ (Վարշավան այն ժամանակ զինվորական դրության մեջ եր), բայց միաժամանակ եյի հաջողության հսկայական նշանակությունը:


— Կիործենք:

Վիտը սպասում եր միայն հայտարարությանը:

— Ցես համոզված եմ հաջողության մեջ,— ասաց նա բաժանվելիս: — Հա, մի բան ել կա, մահապարտներին վոչ մի խոսք այդ մասին: Նրանց հուզմունքը կարող ե ձախողել գործը:

Դրա հետ յես համաձայնվեցի և մենք բաժանվեցինք:

Նույն որն յեվեթ յես կենտրոնական կոմիտեյի նիստում գեկուցեցի Վիտի հետ ունեցած իմ տեսակցության մասին: Ինձ լուցին չընդհատելով, բայց իմանալով բանն ինչումն ե, ման-



Մի րոպեից նետ Վիտն արդին կանգնած եր միջնապատի մյուս կողմը

բամասնություններով այլքս չհետաքրքրվեցին, վորովհետև բու-  
լորին ել այդ վերին աստիճանի ցնորամտություն թվաց:

— Յեկ այդ առաջարկում ե Վիտը, անվստահորեն հարցրեց  
պատկառելի Յանը, կենտրոնական Կոմիտեյի աչքի ընկնող ան-  
դամներից մեկը:

Բայց բոլորի համար անսպասելի կերպով Վիտի նախագիծը  
ջերմ պաշտպանեց նիստին մտանակցող Աննան:

— Այդ այսքան ել ցնորական չե, ինչպես առաջին հայաց-  
քից ե թվում, — հայտարարեց նա հանգիստ: Աննայի կարծիքը  
հաշվի յեր առնվում: Նրա հայտարարությունը բոլորը հասկա-  
ցան, վորպես այդ գործին մասնակցելու առաջարկություն:

— Համենայն դեպս պետք ե փորձել, — պնդում եյի նաև  
յես, վորպես պատասխան կենտրոնական Կոմիտեյի մյուս ան-  
դամների կասկածամիտ ժպիտներին:

Շատ գործ կար, և վորպեսզի ազատվեն այդ նրանց կար-  
ծիքով ցնորական ծրագրերից, վճռեցին նրանց իրագործումը  
հանձնարարել մեզ:

— Փորձեցիք: Առաջարկում եմ, — հայտարարեց Յանը, — այդ  
գործը դնել Բոլեսլավի (այն ժամանակվա իմ կեղծ անունն եր)՝  
և Աննայի վրա ու բաց թողնել դրա համար անհրաժեշտ գու-  
մարներ:

— Յեկ թող ժամանակ առ ժամանակ զեկուցեն մեղ գործի  
ընթացքի մասին, — ավելացրեց կենտրոնական Կոմիտեյի մի ու-  
րիշ անդամ:

— Կարեք չկա, — պաշտպանեց Յանը: — Այդ թողնենք նրանց  
հայեցողությանը:

Ամեն ինչ նախատեսող Աննան պահանջեց, վոր մեղ, մինչեւ  
այդ գործն ավարտելը, ազատեն ուրիշ կուսակցական աշխա-  
տանքներից:

Այդ արդեն ավելի քիչ դուր յեկավ, բայց և այսպես ըն-  
դունվեց:

Յես դժվարանում եմ հաղորդել, թե այդ մոմենտին ինչ  
եյի վերապրում: Մեկ կողմից Պավլյակում բանտարկության մեջ  
տառապում եյին մահվան դատապարտված տասը մարդ, վորոնց  
կյանքը կախված եր նրանից, թե արդյոք էնաջողվի նրանց  
փախցնել: մյուս կողմից՝ դրա համար հարկավոր եր ազատու-  
թյան մեջ գտնվող նույն թվով ակտիվ և անձնվեր կուսակցա-  
կանների յենթարկել նույնպիսի վտանգի և կառավարությանը

հնարավորություն տալ անհաջողության դեպքում՝ տասը կախա-  
ղանի փոխարեն քսանը կանգնեցնել: Յեկ ինչ, յեթե նրանք, ար-  
դեն մտնելով բանտը, ընկնեն թակարդի մեջ, բանտի դարպասը  
կփակվի նրանց հետեւց, և նրանք նույնիսկ զենքը ձեռքին չեն  
կարող դուրս պղծնել այդ թակարդից, վորովհետև բացի բանտի  
վերակացուներից և պահակներից, հենց առաջին իսկ կրակոցին  
բանտի բակը կցվեն հարյուրավոր զինվորներ:

Վարշավան այդ ժամանակ զինվորական դրության մեջ եր:  
Ամեն մի անկյունում կանգնած եյին զինվորների շղթաները, որ  
ու զիշեր փողոցներում թրե եյին գալիս կազակները:

Հատ յերեվույթին, դրա մասին մտածում եր նաև Աննան:  
Նիստում այլքս մնալու ավելորդ եր, և յես վեր կացա, վոր-  
պեսզի գնամ: Աննան ուշքի յեկավ:

— Իսկ վհրատեղ և յերբ հանդիպելու մենք:  
— Այսոր ձեզ մոտ յերեկոյան ժամի ութին:

Իսձ հարկավոր եր մենակության մեջ մտածել ամբողջ ծրա-  
գրի մասին, և յես շտապեցի հեռանալ:

Վիտը, ճիշտն առած, տվեց միայն ծրագրի նշանագիծը: Իս-  
կական ծրագիրը գեռես պետք ե մշակվեր, նախատեսելով այն-  
տեղ նույնիսկ ամենափոքր մանրամասնությունները:

Յեկ ահա, առաջինը, վորը ծրագրի հիմքն եր կազմում —  
ավագ վոստիկանապետի ստորագրությամբ զրվելիք թուղթն եր:  
Ինքը ստորագրությունը մեղ չեր շփոթեցնում, անցարերի  
բլանկների վրա մենք հաճախակի ինքներս եյինք գնում ավագ-  
վոստիկանապետի ստորագրությունը: Այդ բանում մեր ձեռքերն  
արգեն վարդվել եյին: Բայց յուրաքանչյուր թղթի վրա պետք ե  
լինի յելից համար: Բանտի վերակացուն ամեն որ ծրաբներ եր ստա-  
նում ավագ վոստիկանապետից: Յեթե մեր թղթի համարը չհամա-  
պատասխանի ստացված թղթերի համարներին, դա կարող եր կաս-  
կած հարուցել, նա հեռախոսով կկապվի վոստիկանության հետ, և այդ  
հասարակ բանից ամեն ինչ կարող ե անհաջողության մատնվել:

Աննայի հետ տեսակցության ժամանակ յես մատնանշեցի  
այդ դժվարությունը:

— Յեկից համարը կգտնենք, — ասաց նա արիաքար, — Վիտը  
բանտում կիմանա վերջին թղթերի համարը, իսկ նրա վրա մի  
յերկու հարյուր կավելացնենք, և յեկիցը կհարմարվի: Իսձ շփո-  
թեցնում ե մի ուրիշ բան: Իսձ դուր չի գալիս թղթի նախորոք

ուղարկելու նախագիծը։ Պետք ե աշխատել անակնկալ կերպով՝ վերակացվին հնարավորություն չպետք ե տալ մի բողե անզամ խորհելու։ Յես արդեն մտածում եմ, թե ինչպես պետք ե անել այդ։ Այստեղ պետք կդա աքսորում ձեր կողմից ռուսաց լեզուն սովորելը։ Մեր «ռոտմիստրի» բանտը գալուց մի ժամ առաջ, դուք ավագ վոստիկանապետի անունից հեռախոսսվ կարգադրություն կանեք ամեն ինչ պատրաստել, նախազգուշացնելով վերակացվին, վոր թուղթն անձամբ կհանձնե նրան ռոտմիստրը, այդպես ավելի հուսալի յե, — ավելացրեց նա վերջում։

Մենք անցանք մյուս հարցերի քննության։

Մյուս որն Աննան պետք ե բանակցության մեջ մաներ դերձակների ներկայացուցիչների հետ և մորիկիղացիայի յենթարկեր անհրաժեշտ թվով փորձված և հուսալի «ասեղի բանվորներ»։ Ավելի դժվար եր այն հարցը, թե ում ներգրավել վորպես վոստիկաններ և, առանձնապես ում նշանակել «ռոտմիստր»։

Հարցը բարդանում ե նրանով, վոր այդ դեպքը կատարվում եր լեհաստանում, վորտեղ նույնիսկ ոռուսերեն լեզուն լավ տիրապետողները խոսում եյին լեհական առողջանությամբ։

Մենք աչքի առաջ ունեցանք մի նախկին սպայի։

Մյուս որը յես յեղա նրա մոտ նա նայեց ինձ վրա, վորապես մի խելագարի։

— Ի՞նչ եք ասում դուք, դա անկասկած ձախողում ե։ Յես չեմ պատրաստվում ինքնասպանություն գործելու։ Վոչ մի դեպքում։

Այդ պատասխանից քաջությունս կորցնելով, յես գնացի Յուրի մոտ՝ վորի մասին նախորդ որը խոսակցության մեջ հիշատակել եյի հարեւանցիորեն։

Յես նրան համառոտակի պատմեցի, թե բանն ինչումն ե։ Նա հուզվեց։

— Տասը մարդ են, ասում եք։ Անխուսափելի մահ ե։ Ահա թե ինչ են անում սրիկաները։

Յես համբերությամբ լսեցի բոլոր բացականչությունները, յենթադրելով, վոր նա վերջիվերջո կանցնի իմ առաջարկության բուն եյությանը։ Բայց նրա յերեվակայության վրա ավելի շատ ազդեց տասը մարդու առաջիկա մահապատժի հաղորդումը, քան նրանց փրկելու ծրագիրը։

Նա շարունակ կրկնում եր, — Տասը մարդ... Տասը մարդ...»



Ուրամինով Յուրը միանգամայն նախապատճենում եր «ռոտմիստր» դերին

Յես ընդհատեցի նրան,  
— Նրանց կարելի յէ փրկել: Համաձայն եք արդյոք մաս-  
նակցել այդ բանին:

— Կանեմ, ամեն ինչ կանեմ: Սրիկաներ...

Յես բացարեցի, թէ ինչ դեր և դրվում նրա վրա: Նա  
չհակածառեց:

— Իսկ դուք ի՞նչպես, ոռուերեն գիտեք:

— Վատ:

Նա սկսեց ոռուերեն խոսել: Նախադասությունների կա-  
սուցվածքի հետ գեռես կարելի յեր հաշտվել, բայց առողջանու-  
թյունը... այնուամենայնիվ ավելի հարմար թեկնածու չվիճելու  
հետեւնքով, ստիպված եյինք կանգ առնել նրա վրա:

Հետագայում, վորպեսզի մի կերպ արդարացվի այդ առո-  
գանությունը, վորը կարող եր նրան մատնել, մենք նոր թխած  
«ժանդարմի ոռումիսարին» համարեցինք վոչ ոռւս և նրան կոչե-  
ցինք «բարոն ֆոն-Բուդբերգ», իսկ յես վորպես ոռուաց լեզվի  
«գիտակ» ստիպեցի նրան մի քանի նախադասություններ բերա-  
նացի անել, վորոնցով նա պետք ե ցուցահաններ իր համար այն-  
քան անսովոր ծառայության պարտականությունները կատարելիս:

Յեվ ծիծառելի յեր և տիրալի յեր լսել, թէ ինչպես նա  
տանջում եր, վորպեսզի ճիշտ և ազդեցիկ արտասանի ստորին  
անձնակազմի վրա սարսափ ազդող «շարժվեցեք» («պոշեվելի-  
վայտես») բառը:

— Եեշտը վերջից չորրորդ վանկի վրա յե, — բացականչում  
եր նա շփոթված: Յերբեք յես չեմ կարող այդ արտասանել:

Սակայն դրա հակառակ արտաքինով նա միանդամայն հա-  
մազատասխանում եր իրեն արված գերին, յերկու կողմը ուսն-  
րած լայն միրուք, վոսկե շրջանակով ակնոցներ... Յես նայեցի  
Յուրին և յերեւակայեցի ժանդարմի կապույտ համազգեստով, ու-  
ստդիրներով, ուսկապներով, նույնիսկ Ստանիսլավի շքանշանը  
կրծքին: Նա հարմար եր, միանդամայն հարմար:

Գետք եր մտածել «պահակախմբի» մասին և յես մեկնեցի  
Աննայի մոտ:

«Ավագի» նշանակումն ուներ նույնքան մեծ նշանակու-  
թյուն, վորքան և «ոռումիսար» նշանակելը: Այն ժամանակ, յերք  
«ոռումիսարը» գործ պետք ե ունենար միայն բանտի վարչու-  
թյան հետ, «ավագը» պետք ե հետեւիր, վոր նրա դեկավարու-  
թյան յենթակա «ստորագրյալ զինվորները» բանտի վերակացու-

ների և ժամապահ իսկական դինվորների հետ առնչություն ունե-  
նալիս պահպանեն բոլոր ձեվականությունները:

«Ոռումիսար»-ի դերն այդ տեսակետից ավելի հեշտ եր  
«ավագ»-ի դերից նրանով, վոր նա գործ ուներ բանտի վերա-  
կացվի հետ, այսինքն մի աստիճան նրանից ցածր, մինչդեռ  
«պահակներ»-ի և բանտում գոնվող վերակացուների ու ժամա-  
պահների փոխարարերությունն այնպես եր, ինչպես հավասարը  
հավասարին: Բացի այդ, «ոռումիսար»-ը վոչ մի առնչություն  
չակետք ե ունենար բանտից զուրս տարվող կալանավորների հետ,  
իսկ «պահակներ»-ը նրանց ընդունելիս պետք ե նրանց հետ վար-  
վեյին վոչ ավելի լավ, քան նրանց հետ վարվում են իսկական  
պահակները:

Բայց տվյալ գեպքում յես ու Աննան գործում եյինք համ-  
տատապես: Մենք ճանաչում եյինք հարմար մարդու:

Դա ընկեր Մարցելին եր, Հանգիստ, կայուն, հավասարա-  
կշոված, ճարպիկ, գիտակից հեղափոխական եր, վորը բազմա-  
թիվ անգամ վասնդի բովեներին լրիվ սառնասրտություն եր  
ցուցարերել, և նա միանգամայն հարմար եր այդ պատասխանա-  
տու և վասնդավոր գերին: Մեր հրավերով ներկայանալով, նա,  
չընդհատելով, լսեց մեզ, հանգամանորեն հարցրեց այն ամենի  
մասին, վոր նրա համար պարզ չեր, իսկ հետո, առանց մի վորեե  
ավելորդության, հանգիստ հայտարարեց:

— Համաձայն եմ:

Միաժամանակ նույն որն յեկեթ մենք նշանակեցինք ապա-  
գա «պահակներին», կանչեցինք նրանց, պայմանավորվեցինք  
հետները: Բանվորները բանվորի ձեվով եյին արձագանքում մեր  
առաջարկությանը:

— Պետք ե ազատել: Համաձայն ենք:

Միայն շուտ հրապուրվող, արագընթաց «Ճաղատը» արգեն  
գնալուց առաջ պահանջեց:

— Մի պայման, ընկերներ, տանելուց հետո յես կլինեմ  
ձածկակառքի մեջ և առաջինը կհայտնեմ, վոր մենք նրանց տա-  
նում ենք ազատելու:

Նախապատրաստությունն առաջ եր գնում:

Յես կապիցի մեր սաղմական կազմակերպության հետ, և  
նա անմիջապես հրահանգիչ սպա տվեց, վորն ամենակարճ ժա-  
մանակամիջոցում պետք ե սովորեցներ ապագա «պահակներին»

և հենց իրեն «ռոտմիստրին» այն ամենն, ինչ նրանց ռազմաշկան գծով պետք կգար, և ուղարկելուց առաջ պետք ե ստուգեր, արդյոք վորեկ պակասություն չկա զգեստի մեջ։ Մենք գիտեայինք սամանված համազգեստը չպահպանելուց առաջացած ձախողումների մասին և նախորոք միջոցներ ձեռնարկեցինք, վորպեսզի այդ տեսակետից լրիվ կերպով ապահովված լինենք։

Տեսչին յես կարգադրեցի գալ այն սենյակը, ուր պետք է հավաքվելին նրա ապագայի սաները, և հենց նույն յերեկոյան, գալով այդ սենյակը՝ ստուգելու, թե արդյոք ամեն ինչ կարգին և կործն առաջ է գնում թե վոչ, յես ականատես յեղա մի տարորինակ մուշտովվայի։

Յել հրահանգիչը, և՛ հրահանգվողները, առանց կոշիկի, — վորը վոտարորիկ, վորը միայն գուլպաներով — վորպեսզի վոչ մի աղմուկ չշանեն — ըստ հրամանի մեկ շուռ եյին գալիս, մեկ շարվում եյին զույգ-զույգ, մեկ իրար հետեւից եյին գնում, մերթ մեկ-մեկ, մերթ՝ յերկու-յերկու, կամ չորս-չորս եյին գնում։ Այդ ամենը կատարում եյին լուռ, ուշադրությամբ, և միայն կիսաձայն հրամանը խանգարում եր լուռթյունը։

Իմ գալս մի քանի րոպե դադարեցրեց զբաղմունքը։ Ապա հրահանգիչն այն աստիճան եր տարվել իր գերով, վոր հրաման տվեց։

— Զգացաւ։

Բայց իսկույն գլխի ընկալ և մասնակցողների միահամուռքը ջոցի տակ ուղղեց։

— Չե, չե, Ազգատ։

Զհամբերեց նաև Աննան։ Նա ել, յեկալ ստուգելու, թե ուսուցումը ինչպես է գնում։ Սպան մեղ հանգստացրեց։


— Հրաշալի յեն յուրացնում։ Ուղղակի զմայլվում ես։

Գործի այդ կողմը կանոնավորված եր։

Յես ու Աննան հեռացանք։ Յես նրան թեվանցուկ արի, և մենք, վոչնչով չտարբերելով մեղ հանդիպող իրար գուրգուրող հարյուրավոր զույգերից, գնացինք նրա բնակարանը, վոչ մի կասկած չհարուցելով ամբողջ քաղաքում ցրված զինվորների, վոստիկանների և ժանդարմների մեջ։

Աննայի բնակարանում մի անգամ ևս մանրամասն ստուգեցինք, թե ինչ ե արված և ինչ ե մնում անելու։

Ավագ վոստիկանապետի ստորագրությամբ նշված բոլոր բանարկյալների անունների, հայրանունների, ազգանունների



Հրահանգիչը և բարօն նրանագվողները, առանց կոչիկի, վար վարորիկ, վար միայն գուլպաներով՝ հայլում եյին սենյակում

թվարկումով, թուղթը պատրաստում եր մեր անցագրալին բյու-  
րոն:

Վաղը մենք կստանանք այն: Պակասում եր միայն յելից  
համարը և ուղարկելու որաթիվը, վորոնք պետք ե գրվելին նույն  
թանաքով և ձեռագրով, ինչով զրված եր ավտդ վոստիկանապե-  
տի ստորագրությունը:

Հերթական յելից համարների վերաբերյալ հարցապնդումն  
արդեն հաղորդված եր բանա, և դա արգելք չի հանդիսանալ:

Այդ թուղթը կհանձնե «Գոն-Բուղբերդը»-ը, իսկ մերոնց  
բանուց մի ժամ առաջ յես ավագ վոստիկանապետի ա-  
նունից հեռախոսով հրաման կհաղորդեմ վերակացվին, վոր բան-  
տարկյաններին նախապատրաստի ուղարկելու համար: Այդպիսի  
հրաման ստանալով «Մայերից», իրենց վերակացուն այլևս նրան  
չի ստուգի: Ի դեպ յես նրան կասեմ, վոր բանտարկյաններին  
ուղարկելու գրավոր պահանջը նրան կհանձնի անձամբ ինքը  
ժանդարմի ստոմիստը:

Մենք վերջնականապես կանգ առանք սրա վրա:

Համազգեստը և զենքը պատվիրված եր և մյուս որը պետք  
ե բերվեր այն բնակարանը, վորտեղից բանան եր մեկնելու կեղծ  
վոստիկանների խումբը:

Զինվորական կեցվածքի նկատմամբ վոստիկաններից պա-  
հանջում եր ավելի քիչ բան, քան ժանդարմներից: Վոստիկանա-  
կան համազգեստ պատրաստելը նույնպես ավելի հեշտ եր, քան  
ժանդարմները: Իսկ քանի վոր, ըստ մեր ունեցած տեղեկություն-  
ների, վոստիկանների կողմից մահապարտներին միջնաբերդն  
ուղեկցելու դեպքերը ըավականին հաճախակի ելին, մենք կանգ  
առանք նրա վրա, վոր մեր ընկերներին դարձնենք վոչ թե ժան-  
դարմներ, այլ վոստիկաններ: Հաշվի առնվեց նաև այն, վոր բան-  
վորներն ավելի հեշտությամբ կիսազան քաղաքապահների գերը,  
քան ժանդարմների:

Մնում եր վորոշել բնակարանի հարցը: Այդ հեշտ ինդիք  
չել:

Այն բնակարանը, վորտեղից գուրս են գալիս ժանդարմի  
զլիսվորությամբ տասը վոստիկաններ, անխուսափելիորեն իր  
վրա պետք ե դարձներ վոչ միայն բոլոր հարեւան բնակիչների,  
այլ և ամբողջ թաղի ուշագրությունը: Տասը մահապարտներին  
բանալից դուրս տանելու վաստը վարշավայի բնակչությունից  
իշխանությունները չեցին կարող ծածկել յեթե նույնիսկ ցան-

կանային: Իսկ հենց վոր քաղաքում կտարածվի կեղծ վոստի-  
կանների կողմից նրանց տանելու լուրը, գժվար չի լինի այդ  
փաստը համեմատել բնակարանից անհայտ ուղղությամբ հեռա-  
նալու և այստեղ վոստիկանների յերևալու հետ:

Պարզ եր, վոր այդ բնակարանի հայտնաբերումը կարող եր  
պահուրզական բաժնի ձեռքը տալ թերի ծայրը, վորով նա կաս-  
ներ մինչև կծիկը, և այն ժամանակ մեկ մահապարտներին կփո-  
խարինելին մյուսները:

Դրա համար ել բնակարանի հարցը լուրջ հարց եր, վորից  
կախված եր այդ համարձակ և վտանգավոր ձեռնարկման հաջող  
վախճանը:

Մեզ հաջողվեց այդ վորոշել միայն չնորհիվ այն պահպա-  
նական միջոցների, վոր գործադրում եր այդ ժամանակ վոստի-  
կանությունը ուղղմական դրության կապակցությամբ: Այդ մի-  
ջոցառումներից մեկն ել այն կարգադրությունն եր, վորի համա-  
ձայն միջանցիկ բակեր ունեցող բոլոր տներում և ցերեկը և  
գեշերը պետք ե բաց մեար միայն մեկ գարպասը:

— Բնակարանը պետք ե շինել միջանցիկ բակ ունեցող տնե-  
րից մեկում, — տուաջարկեց Աննան:

Յես չհասկացա, թե ինչումն ե կայանում այս առաջարկու-  
թյան եյությունը:

— Փակ գարպասից նրանց կտրելի յե աննկատելի կերպով  
դուրս թողնել իսկ այդ գարպասի համար վաղն յեվեթ պետք ե  
բանալի շինել նախորոք հանելով կողպեքը, ընդորինակելով մե-  
ղրամոմով:

Նա գիտեր մի այլպիսի բնակարան իերուսալիմսկի փողոցի  
վրա, առաջին հարկում:

Նրա մուտքն ուղղակի գարպասից եր:

— Իսկ տերի՞րը:

— Մեր մարդիկն են, միանգամայն վստահելի: Յես դրանով  
կզբաղեմ վաղն առավուլանից և փականագործին ել հետա-  
կվեցնեմ:

Նա չեր հոգնում: Մյուս որը նա ինձ հաղորդեց, վոր արդեն  
պատրաստ ե, և առաջարկեց ինձ անձամբ ստուգել, համապատաս-  
խանում և արդյոք այդ բնակարանն իր կոչմանը:

Յես ստուգեցի: Ավելի լավ սպասել չեր կարելի: Աննան յե-  
րեխայի պես ուրախանում եր, մանրամասնորմն պատմելով, թե  
ինչպես ճարպկորեն կարելի կինի հետեւի գարպասից աննկա-

տեղի կերպով մեկը մյուսի հետևից դուրս թռղնել «վոստիկան-ներին»:

— Դոնապահը, գիտեք, մյուս դարձասումն ե՞ Այդ դարձա-սով վոչ վոք չի գնում-գալիս:

Նա քիչ եր մնում ուրախությունից թռչկոտեր:

— Դեռ, յեկեք այժմս տեսնենք, թե ել ինչ ե հարկավոր, — միանգամից գործի անցավ նա:

— Մինչեւ բանտը մտնելն ամեն ինչ կարգավորված ե, բայց նրանց վերագարձի ճամբան ինձ համար պարզ չե:

Մենք զբաղվեցինք այդ հարցով և միանգամից հանդիպե-ցինք նոր դժվարության:

— Կհանձնեն նրանց, — մենք մահապարտյալների մասին ու-րիշ կերպ չեյինք ասում, քան «նրանք» — մերոնք նրանց կտե-ղավորեն բանտի ծածկակառքի մեջ: Բայց չե՞ վոր կառապանը բանտիցն ե: Ի՞նչ անենք նրան: Յերբ նա նկատի, վոր պահակ-ները ճանապարհը ցույց են տալիս վոչ միջնաբերդի ուղղությամբ, նա կարող է ձիերը կանգնեցնել հենց առաջին խել խաչփող-ցում, վորտեղ կանգնած ե զինվորների շղթան, և այն ժամանակ ամեն կոչ կծախողվի. և՛ մերոնք կկորչեն և՛ ազատվածները:

Մենք արդեն նախորդ վորոշել եյինք «վոստիկաններից» յուրաքանչյուրին տալ մեկական ավելորդ ատրճանակ ազատված-ների համար, բայց քան մարդու զինված դիմադրությունը յերբ ամբողջ քաղաքը լցված եր զինվորներով և կազակներով նախո-րոք անհաջողության եր մատնված:

Յես առաջարկեցի կառապանին քնեցնել համապատասխան ձևով պատրաստած ծխախոտով, վորովհետև հարկավոր եր կառա-պանին անվտանգ դարձնել առանց մի վորեւ աղմուկի:

— Իսկ յեթե նա չի ծխում:

— Սպառնալ:

— Իսկ յեթե նա չվախենա, գիտենալով, վոր ամեն մի ան-կյունում նա զինված պաշտպան ունի:

Մենք կանչեցինք խորհրդակցության Մարցելիին, ապագա-յի «ավագին»:

— Դատարկ բան ե: Քսան մարդն առանց աղմուկի մի կերպ նրա հախից կգա:

Վոչ ինձ և վոչ ել Աննային այդ պատասխանը չգոհաց-րեց:

— Այդ գործում բոլոր մանրամասնությունները պետք ե նախատեսվեն:

— Լավ, այդ հարցը մենք ինքներս կընսենք: Կարող եք հանգիստ լինել: Մեզ հավատ ընծայեցեք: Մի բան կհնարենք: Դա այնքան ել դժվար չե: Ինձ ուրիշ բան ե անհանգստացնում, նը-րանց ուր ենք տանելու:

— Քաղաքից դուրս, — պատասխանեցինք յես ու Աննան միա-բերան:

— Քաղաքից դուրս, հասկանալի յե, բայց վորոշակի վրա-տեղ: Ծածկակառքը բաց դաշտում չի կարելի թողնել, իսկ այն չարաբաստիկ կառապանին պետք ե պահել մի այնպիսի խու-տեղ, վորպեսզի նա այնտեղից շուտ դուրս չգա:

Մարցելին իրավացի յեր: Մենք առաջ այդ մասին չեյինք մտածել:

— Դուք ունեք վորեւ առաջարկություն այդ մասին, — գի-մեցի յես նրան հարցով:

— Վոչ: Մտածեցի, մտածեցի, բայց վոչինչ չկարողացա հը-նարել:

Մենք հանդիպեցինք նոր դժվարության: Միթե դրանից բոլոր ձեռնարկումներն անհաջողության կմատնվեն:

— Պետք ե յելք գանել, — ընդհատեց Աննան լուսթյունը:

— Հետաձգենք այդ հարցը մինչև առավոտ, գուցե զիշերը միշտ վորեւ բան հնարենք:

— Իսկ առաջմ քննության առնենք հետագա անկելիքնե-րը, — առաջարկեց Աննան: Բանտի ծածկակառքը տեղ ե հաս-նում...

— ... Նրա մեջ ենք ձգում կառապանին, — ընդհատեց նրան Մարցելին, — և փակում ենք բանալիով: Մինչեւ բաց կանեն գըու-ները և նրան կազմտեն, մենք այնուամենայնիվ մի քիչ ժամա-նակ կշահենք:

— Ճիշտ ե: Բայց հենց այնտեղ «վոստիկանները» պետք ե դառնան քաղաքացիական հազուստով:

— Այդ հեշտ ե, վոստիկանական համազգեստի տակ յուրա-քանչյուրը պետք ե հագնի քաղաքացիական հազուստ:

— Այդ հեշտ ե, հասկանալի յե, բայց զենքն ի՞նչ պետք ե անենք:

Դա դժվարին հարց եր: Անցորդներին, հատկապես զիշերը, այն ժամանակ մի քանի անգամ խուզարկում եյին:

Զենքի հայտ բերելը վճռում եր մարդուս ճակատագիրը:

Թույլ տալ, վոր մարդիկ բանտարկյալներին տանելուց հետո քսան ատրճանակի համար ընկնեյին ժանդարմների ձեռքը, ամենաքիչը կարելի յե համարել վայրագություն: Դրա յելքն ինքն իրեն եր բացվում, ինչքան ել կուսակցության համար թանգ եր զենքը, բայց պետք ե այն դեն ձգել:

Բայց այդպիսի վճիռ՝ վճիռ եր առանց տիրոջ:

— Դրա մասին մենք արդեն խոսեցինք, — հայտնեց Մարյելին, — բայց հասարակությունը միաձայն այդ մերժեց, այսպես պարզ ասում ե. «Զենքը չենք հանձնիլ»:

Բանվորների կողմից, վորոնք զենքի կարոտ եյին քաշում և յերբեմն այն ձեռք եյին բերում մեծ վտանգով ու զոհերով, այդպիսի պատասխանը միանդամայն հասկանալի յեր:

Բայց մեզ համար պարզ եր, վոր զոհել կյանքը՝ այն զենքը պահելու համար, վորն այնուամենայնիվ չես կարող պահել անշկարելի յեր:

— Պետք ե նրանց համոզել:

— Համոզում եյի... վոչ մի պատճառաբանություն չի առաջում: Խոսեցի կարգապահության մասին, բայց այդ ել չազդեց: Լսել անդամ չեն ուզում: Նոր դժվարություն... Քանի այդպիսի դժվարություններ պետք ե գեուս լուծենք հետազում:

— Լավ, վճռեց Աննան: Ցոլորին վտանգի յենթարկելու վիճակնեն, վտանգի յենթարկենք մի քանիսին: Ազատվածներին պետք ե տանենք քաղաքից դուրս: Յերբ կսահմանենք նրանց բերելու վայրը, այնտեղ պետք ե դա նաև այդ շրջանի բանվորներից մեկը, վորը քաղաքից դուրս ե ապրում և իր մոտ տանի բոլոր ատրճանակները, իսկ այնտեղից արդեն մի կերպ կցըենք: Շարունակեցնեք: Ազատվածներից յուրաքանչյուրի համար հարկավոր ե բնակարան, վորտեղ նա իրեն կարող ե պատշաճ տեսք տալ՝ շորերը փոխել, ածիլվել: Այդ բնակարաններում արդեն՝ պետք ե սպասեն յերկաթուղայինները և իսկույն յելքի, առաջին գընացքներով, ուզում ե դա լինի ապրանքատար թե մարդատար այդ միւնույն ե, նրանց ուղարկեն մինչև սահման: Նախքան ժանդարմները գլխի կընկնեն, նրանք պետք ե լինեն յեթե վոչ սահմանի վրա, համենայն գեպս հեռու: Բնակարաններն արդեն նշված են, յերկաթուղայիններն ընտրված, կոստյումները՝ պատրաստ: Յես արդեն զնել եմ նաև ածիլելու պիտույքներ:

— Իսկ «վոստիկանները»:

— Մի քանիսին, առնվազն ժամանակավորապես, ստիպված պետք ե լինեյինք ցրելու: Նույնիսկ չի կարելի պատկերացնել թե դրանից հետո ժանդարմներն ինչպիսի խառնաշփոթություն կառաջացնեն: Կախվեն համատարած խուզարկություններ և բանտարկություններ... Միայն վոչ մի բանի մեջ չկասկածվողները կարող են հանգիստ մնալ:

Մենք գեռ յերկար ժամանակ քննում եյինք այդ մանրամասնությունները:

Պարզ եր, վոր բանտարկյալներին պետք ե տանեյինք քաղաքից դուրս և յես Աննայի հետ վաղ առավոտյան գնացինք հետախուզության:

Որը Պարզ եր: Յերկնքում վոչ մի ամպ չկար: Քաղաքից դուրս իրար գուրգուրող զույգերի վաղաժամ զբուանքը վոչ վորի մեջ վոչ մի կասկած չեր կարող հարուցել: Քաղաքը հենց նոր եր արթնանում: Ճամբին մենք հանդիպում եյինք բանվորների, վորոնք գնում եյին ֆաբրիկաներ և գործարաններ ու ամեն տեսակի թոշուններ բարձած դյուղական սայլերի, վոր քշում եյին գեպի քաղաքի կենտրոն: Քաղաքի ծայրին մոտենալիս նշմարվում եյին շենքեր, հետո բանջարանոցներ, կարտոֆիլի, կաղամբի, գազարի, ճակնդեղի շարքեր: Ճանապարհից մի քիչ հեռու բարձրանում եր փայտյա ցանկապատ: Այն մոմենտին, յերբ մենք մոտեցանք ցանկապատին, դարպասը բացվեց և դուրս յեկավ վարունգով բեռնած մի սայլ: Սայլի վրա նստած մարդը կանգնեցրեց ձին, ծածկեց գարպասը, իսկ հետո կողքի նեղ գոնով նորից դուրս յեկավ և խնամքով փակեց գոնակը կողպեքով:

Աննան բոնեց իմ ձեռքից:

— Տես, տես... նայեցեք:

Դա հենց այն եր, ինչ մեզ եր հարկավոր:

Մարդը նստեց սայլի վրա, մարակսվ խփեց, և սայլը շարժվեց գեպի քաղաք, իսկ մենք կամցացուկ մոտեցանք ցանկապատին:

— Յեվ հեռու չե...

— Յեվ սկզբում նույն ուղղությունն ե, ինչ վոր գեպի միջնաբերդն ե տանում:

Ցանկապատը բարձր եր, խիտ, վոչ մի տեղ անցք չկար: Մենք այն գիտեցինք չորս կողմից: Բայց այդ դիտումը մեզ քիչ ուրախացրեց:

— Միայն թե ներս ընկնել — հուղվում եր Աննան:



Այն բռապելին յերբ մատեցամբ դարպասին՝ բացվեցին դռները յեվ դուռը յեկայ սայլը

— Դարպասը փակվում է ներսից... Յերեվի սողնակով, վորը կարելի յեւ աեղից շարժել։ Բայց ի՞նչպես ներս մտնել Չե վոր սամի ինչ վոր բերդ եւ

Մի տեղ ցանկապատին ընդհուպ մոտենում եր՝ մի ծառ, վորի ձյուղերը ցանկապատի վրայով կախվում եյին բանջարանոցի մյուս կողմը։ Յես այդ ցույց տվեցի Աննային։ Բերդի մուտքը գտնվել եր։

— Բայց այնտեղ կարող ե կապած շուն լինել։ Նա կհաջի, և այն ժամանակ...

— Մերոնցից ով ե ապրում այս կողմերում, — լարում եր Աննան իր հիշողությունը։ — Սպասեցեք, սպասեցեք... Հա, Ստեփանն ե, ապրում այստեղ մոտիկ։ Այն, այս Գնանք նրա մոտ։

Բարեբախտաբար, մենք Ստեփանին պատահեցինք տանը։

Մեր գալը մի այնպիսի անսովոր ժամանակ, անհանգստացրեց նրան։

— Ի՞նչ ե պատահել։

— Վոչինչ։ Գործ կա։

Նա հետաքրքրությամբ նայեց մեզ։

— Այստեղ, ձեզնից վոչ հեռու, բանջարանոց ե թե պտղատու այգի՝ չորս կողմից շրջապատված բարձր ցանկապատով։ Մեզ անպայման հարկավոր ե իմանալ, արդյոք ներսում սողնակի վրա կողքից կա, թե նա հենց այնպես հասարակ ձեռվ կողքից ե՝ փակվում։

Նա անհասկանալիորեն նայում էր մեզ։ Մինչև այժմս նա այդպիսի հանձնարարություններ դեռ չեր կատարել։

— Ի՞նչի համար ե այդ։

— Հետո կիմանաք։ Բայց այդ մեզ հարկավոր ե շուտ իմանալ։ Կարող եք այդ անել։

— Իհարկե կարող եմ, բայց բան չեմ հասկանում։

— Յեվ հարկավոր ել չի հասկանաւ — ծիծաղելով ընդհատեց նրան Աննան։ — Կարող եք մեզ հավատ ընծայել։ Դա շուտ կարելուր ե։

Անհրաժեշտ տեղեկանք մենք ստացանք ավելի շուտ, քան յենթադրում եյինք։

Ստեփանը զնաց մյուս սենյակը։ Այնտեղից լսվեց նրա հաստ ձայնը. «Յանեկ», կանչեց մի ինչ վոր մարդու, իսկ մի յերեք բռակելից հետո վերադարձավ մեզ մոտ։

— Սողնակի վրա վոչ մի կողպեք չկա։

— Իսկ այնտեղ կապած շուն կա՞:

— Ինչո՞ւ չեյիք առաջուց ասում, վոր այդ ել և ձեզ հետաքըրքում: Եղ ի՞նչ ե, պատրաստվում եք մոռ գողանավ կատակ արեց նա:

Նորից կանչվեց Յանեկը:

— Յանեկն ամեն ինչ գիտի, — ժպատաց Աննան:

— Շուն չկա, — հաղորդեց Մտեփանը:

— Դուք վ՞րտեղից եք իմանում այդ բոլորը:

— Իմ տղան միշտ այնտեղ ե մագլցում: — Մեկ ել տեսար, գլուխը կկոտրի: Միշտ գնում ե մոռի և մոշի:

Մենք գործի անցանք և առաջարկեցինք ճշությամբ ուսումնամիրել բոլոր պարագաները:

— Ինչո՞ւ համար ե:

Մենք Կրան ծանոթացրինք մեր ծրագրերին:

— Դուք պետք ե լինեք բանջարանոցում, յերբ մերոնք կգան, միանգամից բաց կանեք դարձասը և, հենց վոր ծածկակառը կմանի բակը, կիակիք:

Բերելը տեղի կունենա գիշերը: Ատրճանակները կձգենք ցանկապատի վրայով ծառի մոտ, իսկ դուք, դուրս թողնելով մերոնց և փակելով դարձասը, կանցնեք ցանկապատի վրայով և զենքը կտանեք ձեզ մոտ: Իսկ դուք ի՞նչպէս դուրս կգաք բանջարանոցից, — հանկարծ ինքն իբեն ընդհատեց Աննան:

— Դեհ, Յանեկը կբարձրանա, իսկ յես չեմ բարձրանա:

— Իսկ ձեր և կաղակների ու զի՞նվորների փոխհարարերությունն ի՞նչպես ե:

— Մեղ մոտ, բանվորական ավանները, նրանք հաճույքով չեն այցելում:

— Դեհ, բավական ե: Հենց նույն որն յելեթ մենք ձեզ կվերցնենք դենքը:

Աննան այն աստիճան զգացվեց, վոր նա ցանկացավ Յանեկին փաղաքշել մեղ այդ գրությունից հանելուն համար: Բայց յես դեմ եյի: յերեխան չպետք ե իմանար մեր այցելության մասին:

— Մենք ձեզ առաջուց կնախազգուշացնենք, յերբ պետք ե հերթապահել բանջարանոցում:

Յեվ, մնաս բարեվ ասելով Մտեփանին, մենք քաղաք վերաբաժանք:

— Կարծես ամեն ինչ կարգին ե, — հանրագումարի բերեց Աննան մեր եքսիլուրսիայի արդյունքները:

— Ամեն ինչ արված ե: Պետք ե զեկուցել կենտրոնական կոմիտեյին:

Կենտրոնական կոմիտեյի նիստում մեր յերեան գալը զարմացրեց բոլորին: Այն մոմենտից, յերբ կենտրոնական կոմիտեն վիտի նախագծին կասկածամտորեն նայեց, մենք այլևս նիստերին չեյինք լինում: Բոլորը համոված եյին, վոր մենք յեկել ենք այսպես կոչված, մեղա գալու, խոստովանվելու, վոր մենք ասրվել եյինք ցնորքով:

— Դեհ, Բնչ կա, — հեղնանքով հարցնում եյին մեզ:

Մենք չեյինք շտապում պատասխան տալ և համբերությամբ սպասում եյինք մինչև բոլորը կհավաքվեն:

— Շուտով կլսեք:

Յերբ բոլորը հավաքվեցին, յես սկսեցի իմ զեկուցումը, հետո անելով մի առաջարկություն, վոր միանգամից բեկենեց եր վրա բոլորի ուշադրությունը:

— Պետք ե, վոր կենտրոնական կոմիտեն նախորով մի կոչուղղե բանվորներին, տասը մահապարտյաներին ազատելու մասին: — Առաջարկում եմ այդ կոչն անվանել «Մեր ներումը»\*):

— Զեք տարվում դուք արդյոք, — կասկածով հարցրեց Յանը:

— Կարծես թե վոչ: Մտուգեցեք: Դրա համար ել մենք յեկել ենք:

Յեվ յես մանրամասն զեկուցեցի մեր նախապատրաստությունների մասին:

Նախկին կասկածամիտները փոխեցին իրենց վերաբերմունքը դեպի փորձը, համոզվելով, վոր դա իսկական գործ ե, վոչ թե ցնորք:

Խորամիտ Յանն իսկույն շոշափեց թույլ տեղը:

— Իսկ կառապանին, կառապանին դուք Բնչ եք անելու:

Մենք հաղորդեցինք Մարցելիի հետ ունեցած խոսակցության մասին: Բոլորին, ինչպես նաև մեզ, չգոհացրեց նրա պատասխանը:

— Պետք ե նրան կանչել: Դա գործի ամենաթույլ տեղն ե:

---

\*.) Ներում. — բանտարկալների ազատելը բանտարկության ժամկետը ստանալուց առաջ (ամսիսաիա):

Հարցի քննության շարունակությունը հետաձգվեց՝ մինչև  
Մարցելիի դալը, վորին կանչելու դնաց Աննան:

Նրան առաջվա նման զղայնացնում եր այն, վոր «այդպիսի  
հասարակ բաներով» մեր ուշը ցրում են գործից:

— Սատանան գիտե, թե ինչ ե: Այդպիսի վտանգավոր և  
պատասխանատու գործ գուք վստահացաք մեզ, իսկ բանտի մի  
ինչ վոր զզվելի կառապանի անվտանգ դարձնելը համարում եք  
այնքան լուրջ, վոր ամբողջ կենտրոնական կոմիտեն դրանով և  
զբաղվում: Յես չե վոր ասացի, վոր այդ վերցնում եմ իմ պա-  
տասխանատվությանը:

Նկատելով, վոր այդ պատասխանը չբավարեց մեզ նա եւ  
ավելի ջղայնացած ավելացրեց:

— Ել ինչ կարող եմ ձեզ ասել: Նստիքի վրա կնստեն մե-  
րոնք: Կառապանը կլինի մեջտեղը: Այդպիսով նրա ամեն մի  
շարժման վրա անընդհատ հսկողություն կլինի: Իսկ հետո կտես-  
նենք... Չե վոր ճանապարհին կպատահի մի վորմե խուլ փողոց,  
վորտեղ կառապանի հետ վարվել՝ ինչպես պետք ե, կարելի յե:

Նա այնպես եր համոզված այդ բանում, վոր այդ համոզ-  
մունքը հաղորդվեց նաև ուրիշներին:

— Դեհ, լավ! — ասաց Յանը: Ել ինչ ե հարկավոր:

— Անա թե ինչ՝ Հարկավոր ե, վոր բանտ ուղարկելուց  
առաջ կենտրոնական կոմիտեյի անունից Բոլեսլավը մերոնց մի  
քանի ջերմ խոսք ասի և հանգստացնի ընտանիքների համար՝  
ձեռնարկումն անհաջողության մատնվելու գեպօրում:

Մարցելին իրավացի յեր, բայց այդ մոմենտին, չնայած  
միայն նախապատրաստություններն եյին վերջացել բոլորի  
տրամադրությունն այնքան բարձր եր, վոր յես լրջորեն ասացի  
նրան.

— Յես ձեզ ել բարի ճանապարհ կմաղթեմ:

— Իսկ յես ձեզ գրողի ծոցը կուղարկեմ:

Նախապատրաստությունները վերջացել եյին: Մնում եր  
միայն նշանակել յելութի ժամկետը:

Այդ ամբողջ որը մենք նվիրեցինք բոլոր մանրամասնու-  
թյունների մանրակրկիտ ստուգմանը: Ամեն ինչ պատրաստ եր:

Յերեկոյան մենք ներկա եյինք զլխավոր գործին:

«Ռոտմիստրը», «ավագը», «վոստիկանները»՝ համազգեստ  
հագած իրար եյին նայում, ծիծաղելով:

— Միայն դեմքերն են ծամածովել, — նկատեց սպահրահան-  
գիչը:

Յեվ իսկապես դեմքերը շատ քիչ եյին հարմարվում գերե-  
րին: Մի ինչ վոր մեկն առաջարկեց գրիմի դիմել բայց բոլորին  
այդ ավելորդ թվաց:

— Այդպես ել յուլա կգնա: Ավելորդ ե: Հավանական ե, գեմ-  
քերն արդեն չեն ստուգելու: Դրա համար ժամանակ չեն ունե-  
նալ:

— Իհարկե, «շարժվեցեք» («պոշեվելիայ»), — այս անգամ  
ճիշտ արտասանեց Յուրը: — Այդ նրանց կսիպէ վազվել: Ժա-  
մանակ չեն ունենալ գեմքերին նայելու:

— Դեհ, ընկերներ, — հանդիսավոր կերպով ընդհատեց այս  
կատակներն Աննան, — վաղը յերեկոյան մտածում ենք...

Նրան թույլ չտվին վերջացնել:

— Ինչքան շուտ, այնքան լավ: Մենք ամեն ինչ պատրաս-  
տել ենք:

— Վաղը, հենց վաղը, հայտարարեց Մարցելին:

Յեվ մի անգամից բոլորը լուցին... Այդպես, մի մոմենտ  
գինուրները լուսում են սազմաճակատում վճռական մարտից առաջ:

Յես ոգտվեցի այդ մոմենտից:

— Ընկերներ, մենք բոլորս համոզված ենք հաջողության  
մեջ, բայց կենտրոնական կոմիտեյի կողմից բոլոր մասնակիցներին  
հաղորդելով վողջույն և հաջողություն, յես լիազորված եմ կենտ-  
րոնական կոմիտեյի կողմից ձեզ հայտնելու, վորինչպիսի ընթացք  
ել ստանա գործը, ձեր ընտանիքների խնամքը կուռակցությունը  
վերցնում ե իր վրա: Յես, վոր անձամբ ամբողջ ժամանակ հետեւել  
եմ նախապատրաստություններին, առանց տատանվելու հայտարա-  
րում եմ. հաջողությունն անկասկած ե, և յեթե կենտրոնական կոմի-  
տեն հանձնարարել ե ինձ հաղորդելու ձեզ այդ վորոշման մասին,  
միայն նրա համար, վոր ձեզանից վորեւ մեկը, հաշվելով, վոր  
այդ գործին մասնակցելը նրա կուսակցական պարտքն ե, այնու-  
ամենայնիվ տանջվում ե այն հարցով, թե ինչ կլինի նրա ըն-  
տանիքի հետ, յեթե նա կորչի: Թող ձեզանից յուրաքանչյուրը  
լինի արի: Նա կատարում ե իր պարտքը կուսակցության հան-  
գեպ, կուսակցությունն ել կատարում ե իր պարտքը նրա հան-  
գեպ:

Ինձ շրջապատեցին, ձեռքերս սեղմեցին:

Աննայի աչքերում արցունքներ յերեվացին:

Հուզված սպահը առանգիչը վոչ մի խոսք չարտասաննց և  
միայն լուռ սեղմում եր բոլորի ձեռքերը:

Իսկ տասնմեկ մարդիկ, վոր մյուս որը պետք եւ վտանգի  
յենթարկելին իրենց կյանքը, անսովոր վոգենրությամբ կրկնում  
ելին:

— Գլուխ կրերենք... Կազմատենք... Ե՞նչ ուրախություն կլինի:

Հասավ ճակատագրական որը: Ծանր, անսահման յերկար:

Ամեն ինչ պատրաստ եր, տասնյակ անգամներ ստուգված, և  
մնացած ժամանակը մինչև ուշ յերեկո, յերբ պետք եւ գործի անց-  
նելին, — անելու բան չեր մնացել:

Յերեկոյան ժամի յոթին մենք հավաքվեցինք իերուսալիմ-  
սկի փողոցի վրա գտնվող բնակարանում: Բոլորն արդեն համազ-  
գեստ ելին հագել:

Յեկավ նաև հրահանգիչը մի անգամ ևս ստուգելու, թե ար-  
դյոք պատրաստ եւ ամեն ինչ:

Զեյին իմանում ինչի մասին խոսել դրա համար ել ժա-  
մանակը յերկար ու ձանձրալի յեր թվում:

Խփեց ժամի ութը: Միայն ութը: Պետք եւ դեռևս յերկու  
ժամ սպասել:

Ժամի տասին յես տեղից կանգնեցի:

— Դեհ, պատրաստվեցեք: Գնում եմ հեռախոսով խոսելու:  
Կես ժամից վոչ ուշ յես կվերադառնամ և այն ժամանակ  
կզնաք:

Աննան ինձ ճամբու դրեց և փակեց դարպասը: Յես գնացի  
նախորոք պայմանավորված բնակարանը և հեռախոսով կանչեցի  
հետաքննական բանտի վերակացվին:

— Ո՞վ ե հեռախոսի մոտ:

— Հետաքննական բանտի վերակացուն:

— Ձեզ հետ խոսում ե ավագ-վոստիկանապետը:

— Լսում եմ, ձերդ գերազանցություն:

— Մի ժամից վոչ ուշ, ձեզ մոտ կգա ժանդարմի ոստմիստը  
ֆոն-Բուղբերզը, բերելով իր հետ իմ առաջարկությունը: Այդ  
ժամանակ պետք եւ պատրաստ լինեն բանտարկյալները՝ վարչա-  
վայի միջնարերդի տասներորդ պայմիլիոնն ուղարկելու համար:  
Ճշտությամբ զրեցեք նրանց ազգանունները:

— Լսում եմ:



Յես հեռախոսով կանչեցի հետաքննական բանի վերակացվին

Յես թվեցի բոլոր տասը մահապարտյալների՝ ազգանունները:

— Գրեցիք:

— Այո, ձերդ գերազանցություն:

— Կարգացեք:

Վերակացուն կարդաց:

— Ճիշտ է: Գործի անցեք առանց ուշացնելու: Նրա գալու ժամանակ ամեն ինչ պետք է պատրաստ լինի: Պատրաստեցեք բանտի ծածկակալուքը: Պահակախումը հարկավոր չե: Նա կը երեք իր հետ պահակախումը: Ասածս բոլորը հիշում եք:

— Այո:

— Զլինի, թե ուշացնեք, հա:

— Լսում եմ: Ամեն ինչ կանեմ:

Առաջին քայլն արված եր: Յես նորից վազեցի հերուսակմակի փողոցը:

Անխոս իրար ձեռք ելինք սեղմում, վարը խոսքերից ավելի պերճախոս եր:

Աննան դարպասով մեկ-մեկ դուրս և թողնում «վոստիկաններին»: Յես հանգցրի սենյակի լույսը և մոտեցա պատռահանին, դիտելով, թե ինչպես նրանք հավաքվում են փողոցի մեջ:

Հավաքվեցին, շարվեցին, «ոստմիստրը» հրաման տվեց, և նրանք, վոտքերը գետնին ամուր խփելով, ինչպես խոկական զինվորներ, գնացին:

Աննան վերադարձավ սենյակը: Նա հուզված եր:

— Ամենագլխավորը մոռացել ենք... միայն այժմս հիշեցի դրա մասին:

— Ի՞նչ:

— Նրանք ինչպես պետք է իրար կոչեն: Ի՞նչպես պետք են նրանց դիմի «օստմիստրը» կամ «ավագը»:

— Հանգստացեք: Հրահանդին այդ նախատեսել ե: Ամեն մեկն իր ազգանունն ունի:

Նա կայտառացավ, սակայն հուզվելուց նրա վոտքերը թուշել ելին և նա ուժասպառ, ընկալ աթոռի վրա: Բայց այդպես յերկար չմնաց:

Դեռ մի քանի բոպե ել չեր անցել, յերբ նա վեր կացավ, կանչեց տանտիկնոջը և արդեն հանգիստ կերպով սկսեց կարգադրություններ անել:

— Ստուգեցեք, արդյոք նրանք մի վորակե բան չեն թողել, և իսկույն յեփեթ ամեն ինչ կարգի բերեք: Վոչ մի հետք անդամ չմնա...

— Հանդստացեք: Կհավաքենք:

— Մենք գնում ենք:

— Աննա... տանտիկինը կմկմաց:

— Ի՞նչ է: Ի դեպս, գիտեմ, գիտեմ: Ուղում եք իմանալ, թե ամեն ինչ ինչպես անցավ:

— Այո:

— Վաղը կհաղորդեմ:

Մենք մնաս բարեվ ասացինք և գնացինք այն բնակարանը, վորտեղ պետք ե կենտրոնանային բոլոր տեղեկությունները:

Մերոնք գնացին բանտր: Նրանց այնտեղ արդեն սպասում եյին, և յերբ «Փոն-Բուդբերգը» դոնապահին հանձնեց ծրարը, «ավագը» բարձրածայն կանչեց.

— Բաց արա:

Դարպասը բացվեց: «Փոն-Բուդբերգը» արագորեն աստիճաններով բարձրացավ բանտի նախադուռը և գնաց գրասենյակ: Պահակախումը կանգ առավ բանտի առաջ: Այստեղ կանգնած երսակ ծածկակառը՝ կառավաճանը նստիքին:

Դեռ նախադուռը «Փոն-Բուդբերգը» կանչեց ավագ հսկիչին:

— Շուտով կանչիր վերակացվին:

— Արդեն սպասում են գրասենյակում, ձերդ բարձրափայլություն:

Ներս մտնող «օստմիստրին» դիմավորեց վերակացուն:

— Բոլորը պատրմուի ե:

— Այո: Դուրս բեր բանտարկյալներին, — կանչեց նա «ավագին»:

«Ֆոն-Բուդբերգի» հանձնած ծրարի վրա վերակացուն իսկի ել չնացեց: Նա բացեց ծրարը և թուղթը կցելով գործին, հայտարարեց:

— Նորին գերազանցությունն արդեն հեռախոսով հայտնել ե:

— Գիտեմ, չոր պատասխանեց «օստմիստրը»:

Մենք նախադգուշը ելինք նրան, վորպեսպի նա վոչ մի

խոսակցության չբռնվի և բանակի վարչության հետ վատ չըշվարվի:

Մի ինչ վոր բանի համար ավագը վաղեց գրասենյակ:

— Շարժվեցիք, — («ո՞շեւելիվայտես») կանչեց «Փոն-Բուդրելուր»:

Ավագն անհետացավ:

— Արդեն դուրս են տանում, — հանգստացնում եր վերակացուն:

— Հանձնման թուղթը պատրմուի ե:

— Այո:

— Տվեք:

Վերցնելով թուղթը, նա լսեց քայլերի ձայներ սանդուղքաների վրա և դուրս գնաց հաշտը:

— Մեկ, յերկու, յերեք... խնամքով ստուգում եր նա բանտարկյալներին:

— Հրամայում եք նրանց գրասենյակ տանել:

— Կարիք չկա: Ուզդակի բակը տարեք:

Մի վայրկյան նա վերադարձավ գրասենյակ: Վերակացուն արդեն ստորագրել եր թուղթը: «Հանձնեց» խոսքի տակ «ոստմիստր» իր ստորագրությամբ վավերացրեց, վոր «ընդունեց»:

Այդ մի քանի վայրկյանի ընթացքում «պահակները» բակում շարվել ելին յերկարք, կազմելով պատճեշ՝ նախադոնից մինչև ծածկակառքը: Բանտարկյալներին վոչ թե բոլորին միանդամից դուրս բերին նախադուոն, այլ մեկ-մեկ, ընդմիջումներով, վորպեսզի ժամանակ լինի նրանց ծածկակառք նախեցնելու:

Նրանք այնպես գիտելին, թե նրանց տանում են մահապատժի, դրա համար ել «պահակների» շարքի վրա թշնամական հայացք ձգելով, հանգիստ տեղափորվեցին ծածկակառքում, դուցե նրա համար, վոր հաշտվել ելին առաջիկա մահապատժի մտքի հետ կամ դուցե այնպիսի վիճակի ելին հասել, վոր մահը վերադարձում ելին ամենորյա, ամեն բոպէ ճակատագրական վախճանին սպասելուց:

Միայն Յուղը կին, վորը մի յետանդուն յերիտասարդ եր, դուրս գալով նախադուռը, մի հայացք ձգեց չորս կողմը, կարծես անցքի յեր ման գալիս, վորտեղից կարելի կլիներ թուշել դարպասի հետեւ:

Բայց «ավագը» իր կոչման բարձրության վրա յեր կանգնած:

— Դեհ, գեհ, տես քեզ ինչ կանեմ:

Նա բռնեց Յուղը կու ուսից և կոշտ կերպով հղեց ծածկակառքի մեջ:

Նախադոնում յերեվացին «ոստմիստր» վերակացվի հետ և հեռվեց նայում ելին բանտարկյալների տեղավորելուն:

— Անզմւապ են, հարցրեց «ոստմիստր»:

— Կան և անզմւապներ:

— Իվաննավ:

«Ավագը» լարի նման ձգվեց:

— Հինգ մարդ ներսից, յերկուուր նստիքին, դու և մի յերկուսն ել հետեւից:

— Լսում եմ, ձերդ բարձրափայլություն:

«Վոստիկանները» տեղափորվեցին հրամանի համաձայն, «ավագը» սպասում եր հետագա կարգադրություններին:

— Յես առաջ կգնամ և միջնաբերդի դարպասի մոտ ձեզ կսպասեմ:

— Լսում եմ:

— Մեկնիր:

Դարպասը բացվեց, և ծածկակառքը կամաց դուրս յեկալ փողոց: «Ոստմիստր» սեղմելով վերակացվի ձեռքը, գնաց ծածկակառքի հետեւից:

Գիշերվա ժամի 12-ն անց եր կես, յերբ նա հասավ այն բնակարանին, վորտեղ մենք սպասում ելինք լաւբերի: Նախազգուշացված լինելով այն մասին, վոր մեզ մոտ կարող են մարդկակալ գալ, դռնապահը, վոր մեր մարդն եր, կուսակցական, իսկույն բացեց դարպասը:

Յուրը ներս վագեց:

— Գլուխ յեկավ, — ուրախացած հայտնեց նա մեզ:

Մենք վրա ընկանք նրան համբուրելու:

Նա այստեղ յեկեթ դեն շպրտեց համազգեստը և հինգ բռպելից հետո նորից գնաց:

— Գլուխ ե յեկել, բայց վոչ լրիվ կերպով, — հոգոց հանեց վննան: — Իսկ տեսնես հետո ինչ կլինի:

Մահապարտները լուս, ատամները սեղմած նոտել ելին ծածկառքի — վանդակի մեջ:

Լուս, հազիվ իրենց պահելով, նստել ելին նաև «վոստիկանները»:

Յեվ հանկարծ ամեն ինչ փոխվեց, կենդանացավ: Ծածկա-

Կառքը քշեց սալարկով: Անիմսերի դղրդյունը խեղդում եր աղ-  
մուկը:

«Ճաղատը», վերցնելով գլխից գլխարկը, ուրախացած բա-  
ցականչեց.

— Ընկերներ, ճանաչմում ք ինձ... Յես «Ճաղատն» ևմ:Մի  
նայեցեք: Մենք գողացանք ձեզ, տանում ենք ազատելու:

Ազատվածները նայում եյին, զարմացած, չհավատալով  
իրենց ականջներին, չիմանալով, թե արդյոք դա իրականություն  
է, թե յերազ:

— Ճիշտ ե, ճիշտ ե,—հաստատեցին մյուս «վոստիկան-  
ները»:

Տածկակառքում մի չտեսնված բան եր կատարվում: Մար-  
դիկ գրկախառնվում եյին, համբուրվում, իրար ձեռք եյին սեղ-  
մում, մի բողե մոռանալով, վոր դեռ գործը վախճանին չի հա-  
սել, վոր ազատման ճանապարհին դեռևս կարող են խոչընդուներ  
պատահել: «Վոստիկաններից» մեկը ընդհատեց այդ զվարճանքը:

— Յեղբայրներ, ատրճանակները մոռացել եք:

Մի մոմենտում ազատվածները բրաւնիդներով զինվեցին:  
— Համենայն գեպս,—բացատրում եր «Ճաղատը»,—մենք  
քսանն ենք... Յեթե տեղն ընկնի, ճամբար կբանանք:

Հանկարծ ծածկակառքը կանդ առավ:

— Այս ինչ ե:

Բոլորը հանեցին ատրճանակները պատյանից:

— Ի՞նչ ե պատահել,—ուզում եր գլուխը դուրս հանել «Ճա-  
ղատը» ծածկակառքի դուռն պատուհանից:

— Լուցեք.—դուռն մյուս կողմից շշուկով ասաց Մարցելին:

Այդ նա կտնդնեցրեց, բացականչելով:

— Կանգ առ: Անիվը...


Կառապանն իջավ նստիքից և մոտեցավ անիվին, վորի  
վրա, կուցած, ինչ-վոր վարպետություն եյին անում յերկու  
«վոստիկաններ»:

Նա ել կուցավ, բայց այդ մոմենտին հանկարծ կարծես  
ունելիքով, բռնեցին նրա վզից, նրա բերանը թաշկինակ կոխե-  
ցին և բոթեցին ծածկակառքի ներսը:

— Մեկնիր. քշիր:

Միայն այդ ժամանակ ներսը նստածները հասկացան, թե  
ինչն եր կանդնելու պատճառը:

— Հանդիսատ պառկիր, թե չե կսպանենք, կանչեց ինչ վոր



Կոռապանը կուտցավ. այդ մոմենտին համերժ կարծես ունենինը  
բռնեցին նրա վզից

մեկը հատակին անշարժ պառկած, մահվան վախով բռնված կառապանին:

Իսկ ծածկակառքն առաջ գնաց, քաղաքից դուրս յեկալ, հասավ բանջարանոցներին, Բանջարանոցի դարպասը բացվեց, ծածկակառքը իրվեց վարունգի շարքերի մեջ, իսկ դարպասը նորից ծածկվեց:

Սկզբեց «վոստիկանների» կերպարանափոխությունը քաղաքացիան զգեստի:

Ստեփանը մոտենում եր բոլորին, հավաքում եր ատրճանակները և պարկը լցնում:

— Սպասեցք այստեղ ամեն մեկի համար ձմեռային վերաբու և զիմարկ կա, վերաբուի դրանում հասցե կա, թե նա ուր պետք ե ներկայանա:

Դրա մասին հոգացել եր Աննան:

— Կառապանին փակել ծածկակառքի մեջ, — կարգադրեց Մարցելին:

— Պատրաստ ե:

— Բակից դուրս յեկեք մեկմեկ, յուրաքանչյուրը գնա իր հասցեյով:

Մի քանի ըսպեյում բակը դատարկվեց, Մնացին միայն Ստեփանը և Մարցելին:

— Դեռ, Մարցելի, դուք ել գնացեք, իսկ յես կփակեմ դարպասը:

— Փակեցեք, Յե, կմագլցեմ ցանկապատի վրայով:

— Ի՞նչ համար:

— Յերբ դուք կլինեք ցանկապատի մյուս կողմում, յես ձեզ կնետեմ տոպրակն ատրճանակներով, այդ ավելի վատահելի յե... թե չե կարող ե մարդ պատահել:

Փակելով դարպասը, Ստեփանը բարձրացավ ցանկապատի վրա:

— Վոչ վոք չկա, տվեք:

Այս ել հաջողվեց, Գնացին և նրանք:

Մարցելին յեկալ մեզ մոտ զեկուցումով: Այս անգամ նրան ել հասավ: Մենք ուրախությամբ վրա պրծանք նրա վրա: Ուրիշ ժամանակ նա «մեղ յետ կրոթեր», բայց այժմս նա որտառուչ կերպով և փաղաքորեն համբուրում եր մեզ:

Առավոտյան ժամի չորսն եր: Դրսում արդեն լույս եր: Թեյի ժամանակ, վորը յեփել եր Աննան, Մարցելին մեզ պատմում:

Եր, թե ինչպես կատարվեց ամեն ինչ: Հանկարծ մի ինչ վոր մեկը պայմանական նշանով ծեծեց բնակարանի դռւուը:

— Ո՞վ կարող ե լինել:

Մենք կասկածելիորեն նայում եյինք իրար: Բացի Յուրից և Մարցելից, վոչ վոք չկետք ե գար մեղ մոտ:

Ներս մտավ «վոստիկաններից» մեկը՝ Բարտեկը:

Նա սփրթնած եր քաթանի պես:

— Հասցեն շինելի մեջ եմ թողել: Շտապում եյի...

Ուրախ տրամադրությունը միանգամից հողս ցնդեց:

— Ազգանունը չեք հրցում:

— Ազգանունը հիշում եմ, Պավլովսկի յեր, բայց հասցեն...

Աննան գիտեր հասցեն:

— Անա թե ինչ, — միանգամից վճռեց նա, դուք գնացեք Մարցելիի հետ Պավլովսկու մոտ և անմիջապես նրան ընակարանից տարեք մի այլ վայր, ուրիշ թաղ: Յեթե կհասցնեք, յերեք ժամից հետո, շուտ չե կարելի, մենք դուրս կտանենք նաև նրա իրերը, իսկ յեթե չենք հասցնի, թող կորչեն, միայն թե մարդկանց փրկմքը: Գնացեք, պետք ե շտապել:

Նրանք գնացին:

Մենք չեյինք անհանգստանում Պավլովսկիների համար: Մինչև նրանց կգտնեն, հասցեն կջոկեն և կգան խուզարկության, մի քանի ժամ կանցնի, իսկ այդ ժամանակվա ընթացքում Պավլովսկիներն արդեն հուսալի վայրում կլինեն:

Չնայած դրան, ուրախության զգացմունքը, վոր պատել եր մեզ, Մարցելիի գալուց հետո, ցրվեց:

Ժամի յոթին, արդեն մյուս ընակարանում, մենք պետք ե տեղեկություն ստանայինք, թե ինչպես հաջողվեց աղատվածների առաքումը գնացըով մինչև սահման, և Ստեփանն այնտեղ պետք ե հաղորդեր, թե արդյոք վոստիկանությունն արդեն ատագնապ ե բարձրացըրել թե վոչ:

Մինչև ժամի վեցը ստիպված եյինք մնալ այդ բնակարանում առանց գործի: Դա առանձնապես ձանձրալի յեր:

— Այսպես թե այնպիս, մեծ գործ արինք: Հիմա ինչ կասի Յանը, — զրադեցնում յի յետ Աննային խոսակցությամբ, վորը շատ մեծ հոգնածություն եր զգում միայն այն բանեց հետո, յերբ գործն արդեն ավարտվեց:

Նա պառկեց, համարյա յուրաքանչյուր բոսկ ստուգելով, թե արդյոք գնալու ժամանակը չե:

Ժամի վեցին մենք գնացինք մյուս բնակարանը:

Ինչպես հետագայում մեզ հայտնի յեղավ, հենց այդ ժամին բանջարանոցի տերը սայլով յեկել եր այստեղ, բաց եր արել դռնակը և, ոճի կծածի նման, հետ նետվիլ:

— Պահակ:

Ժողովուրդը հավաքվեց, կանչեցին վոստիկանին և, խըմբած ամբոխը դռնակից ներս խուժեց բանջարանոց:

Ստեփանն այդ ամբոխի մեջ եր:

— Զիոք չտաք, ձեռք չտաք, գոչում եր վախեցած քաղաքապահը, անընդհատ սուլելով։ Հավաքվեցին ուրիշ քաղաքապահներ և թաղամասի պետը։

— Տես, տես, ինչ բաներ են արել:

Նա հրամայեց վոստիկաններին բանջարանոցից քշել հաշվաքածներին, դռնակի առաջ կանգնեցրեց քաղաքապահներին՝ իսկ ինքը գնաց հեռախոսով կանչելու պրիստավին։ Կես ժամ անց յեկավ նաև պրիստավը։

— Ուրիշ հարմար տեղ չեն գտել, զզկելի սոցիալիստներ, անպայման իմ թաղաժառում...

Հետախույզի փորձված հայացքով գննեց բանջարանոցը։ Տեսնելով ամբողջ բանջարանոցում շաղ տված վոստիկաննական զգեստները, նա գլուխ ընկավ։

— Սպանել և հենց այստեղ ել թաղել են ստուանները։

Պետք ե փորենք։

Նա մոտեցավ ծածկակառքին։

Փակած ե Նրա մեջ ըստ յերեվոյթին, սպանվածներ պետք ելինեն։ Վոչ մի բանի ձեռք չտալ մինչև քննիչի դալը, — իրամայեց նա թաղամասի պետին, նստեց կառքը և գնաց թաղամաս՝ ավագ վոստիկաննապետին տեղի ունեցած դեպքի մասին հեռախոսով հայտնելու։

Այդ տեղեկություններով Ստեփանը յեկավ մեր բնակարանը մեղ հաղորդելու և անմիջապես յետ վերադարձալ։ Փրկվածներն հենց այդ ժամանակ գնացքներում սլանում եյին դեպի սահման։

Միայն ժամի իննին դեպքի վայրը ժամանեցին ժանդարմաները։

Մանրակրկիտ կերպով դիտելով ամբողջ բակը, քննությունը դեկավարող ժանդարմական գնդապետը մոտեցավ բանտի ծածկակութիւն։

Նա ամբողջ ուժով քաշեց դռնակի բռնակից, բայց չբացվեց։

— Կանչեցնք փականազործի։

Յեկավ փականազործը, Բացին դռնակը... և այստեղից դուրս քաշեցին կիսակենդան կառապանին, վորի ձեռքերը կապված եյին մեջքին։

Նրա կապերը չքանդեցին, այլ միայն բերանից հանեցին թաշկինակը։

Նա հազիվ հազ եր կանգնում վոտքի վրա։

— Դու մի ես։

— Կառապան։

— Ո՞վ։

— Հետաքննական բանտի կառապանը։

— Քեզ մի այդպես արեց։

— Վոստիկանները։

— Եմի վոստիկաններ են։ Զեր խոսքը միատեղ եր նրանց հետ։

— Ո՞ւմ հետ։

— Լավ, հետո կիմացվի։ Պահակախմբի հետ նրան ուղարկեցեք պահնորդական բաժին։

Ժանդարմի գնդապետին հաջողվեց միայն պարզելու, վործածկակառքը պահանորդական բաժին։ Հանդապահմատին հաջողվեց միայն պարզելու, վործածկակառքը պահանորդական բաժին։ Նա գնաց զեկուցելու ավագ վոստիկանապետ Մայերին։

Այս անգամ նա ստիպված չեղավ սպասելու ավագ-վոստիկանապետի ընդունելությանը։

Սովորաբար, յերբ կառապանը, բանտարկյալներին տանում եր, անմիջապես հետ եր վերադասնում բանտ։ Այդ գիշեր նա դեռ չեր վերադարձել, բանտում անհանգստանում եյին։ Վերակացուն վճռեց անհանգստացնել Մայերին և վազ առավոտյան զանգահարեց վոստիկանության հերթագահին։

Այդ գուգագիպեց պրիստավի հաղորդման հետ։

Ավագ-վոստիկանապետն սպասում եր ժանդարմական գլուխապետի դեկուցմանը։

Նա բարկությունից դեռ ու դեն եր ընկնում։

— Տես ձեզ հետ միասին բանտ կգնամ։

— Ո՞ւմ կարգադրությամբ եք բանտարկյալներին ուղարկել, — հարձակվեց նա վերակացվի վրա։

— Զերդ գերազանցության։




Ժամանակակից պոլկովնիկը Շերկայացակ վոսիկանակից Մայերին  
զեկուցման համար

— Ի՞մ,  
— Այո, դուք բարեհաճեցիք հեռախոսով կարգադրել:  
— Խելքներդ կորցրել եք,  
— Ահա և թուղթը:  
Ավագ-վոստիկանապետը աչքերը հասեց թղթին:  
— Իմ ստորագրությունն ե, բայց յեւ չեմ ստորագրել:  
Բանատարկեցին նաև վերակացվին: Նրան հարցաքննելուց  
իմացան «Փոն-Բուդ-Կրգի» հեռախոսելու մասին:  
Կառապանը պատմեց, թե ինչ ոյին բերին եր զլիին:  
— Ի՞նչ անամոթության են հասել նրանք,— հուզվում եր  
ավագ-վոստիկանապետը:  
Ցերեք ժամից հետո ամբողջ վարշավայում խոշոր խորա-  
զրով փակցված եյին մեր բնուցիկները:

**«ՄԵՐ Ա.Ս.ՆԻՍՏԻԱՆ»**

Նրա մեջ հաղորդվում եր, վոր մինք վոչ վոքից ներում  
չենք սպասում, այլ տալիս ենք ինքներս և թված եր մեր կող-  
մից «Ներում» շնորհած անձանց ազգանունները:

Կատաղության հասած ժանդարմենը ցրվեցին ամեն կողմ,  
խուզարկություններ եյին անում, բանադրկ ությունն եր կատա-  
րում, բայց փրկվածներն արդեն նրանց հասանելիության սահ-  
մանից այն կողմն եյին գտնվում, իսկ մահապարտների ազա-  
տելուն մասնակցողներից վոչ վոք չտուժեց:



Պատ. խմբագիր՝ Ա, Դուռը գալքան  
Տեխ. խմբագիր՝ Ա, Դաստիարակություն  
Երբագլիք՝ Հ, Ծանոթեցան

Գլուխահի լիազոր՝ Դ-4714 Հրատ. № 4452

Պատվեր 93. Տիրաժ 5000

Թողթ 62×94 Տպադ. 23/<sub>5</sub> մամ.

Մեկ մամ. 38400 նշան. Հեղինակ. 21/<sub>8</sub> մամ.

Հանձնված և արտադրության 15 դեկտեմբերի 1937 թ.

Ստորագրված և տպագրության 17 ապրիլի 1938 թ.

Գինը 65 կ.

Պետհատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0390531

3736

ԳԻՒԸ 65 ԿՈՊ.

Ф. КОН  
НАША АМНИСТИЯ  
ГИЭ АРМ. ССР, ЕРЕВАН